ՇՐՋԱՓԱԿՄԱՆ 100-ՐԴ ՕՐ

Մարտի 21-ին լրացավ Արցախի շրջափակման 100-րդ օրը: Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում կազմակերպվել է ակցիա՝ վերահաստատելու պայքարի կամքը և արցախցու ձայնը լսելի դարձնելու համայն աշխարհին: Արցախի պետական համալսարանի ուսանողներն ու դասախոսները մասնակցել են ակցիային, հանդես եկել ելույթներով:

ՔՐԵԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍ ԱրՊՀ-ՈՒՄ

Մարտի 21-ին ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի իրավունքի ամբիոնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել քրեագիտական կոնֆերանս՝ նվիրված ՀՀ քրեական և քրեական դատավարության օրենսգրքերում տեղ գտած խնդրահարույց փոփոխություններին, ինչպես նաև ԱՀ-ում դրանց կիրառման նպատակահարմարությանը:

Կոնֆերանսի նախաձեռնող, իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.թ. Տաթև Գևորգյանի խոսքով՝ թեման խիստ արդիական է, և նման ձևաչափով միջոցառում առաջին անգամ է կազմակերպվում. նպատակը՝ ուսանողներին գիտելիք փոխանցելն է նաև ոլորտում պրակտիկ գործունեություն ծավալող մասնագետների կողմից:

Զեկուցումներով հանդես են եկել ԱՀ քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչության պետի տեղակալ, արդարադատության 2-րդ կարգի խորհրդական Հայկ Իշխանյանը՝ (թեմա՝ «Խափանման միջոցները ըստ ՀՀ նոր քրեական դատավարության»), ԱՀ Գլխավոր դատախազության հատուկ քննչական բաժնի պետ, արդարադատության 2-րդ դասի խորհրդական Դավիթ Դալլաքյանը (թեմա՝ «Ապացուցողական գործողությունները Քրեական դատավարությունում»), ԱՀ Գլխավոր դատախազության դատախազ, արդարադատության 3-րդ դասի խորհրդական Լուսինե Սուլեյմանյանը (թեմա՝ «Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները ըստ գործող և ՀՀ նոր քրեական դատավարությունների»), ԱՀ ՆԳՆ ոստիկանության շտաբի պետ, ոստիկանության գնդապետ Արմեն Մովսիսյանը (թեմա՝ «Պատժի տեսակները ըստ գործող և ՀՀ նոր քրեական օրենսգրքի»), Ստեփանակերտ քաղաքի Ոստիկանության վարչության պետ, ոստիկանության փոխգնդապետ Բորիս Ջալավյանը (թեմա՝ «ՀՀ նոր քրեական օրենսգրքով նախատեսված պատիժների կատարումը»), ՀՀ Սյունիքի մարզի 1-ին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վահե Ջիվանյանը (թեմա՝ «Դատական քննության ընդհանուր պայմանները»):

Զեկուցումներն ուղեկցվել են քննարկումներով և հարց ու պատասխանով: Ներկա էին «Իրավագիտություն» կրթական ծրագրի ուսանողներ, դասախոսներ:

«ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ամսաթերթ
Հիմնադիր՝ «ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՊՈԱԿ
Հրատարակվում է 1994 թվականից

Խմբագիր՝ Զ. Սառաջյան
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ.՝ (047) 94 04 91

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում

Իմացիր քո համալսարանի մասին:
Այցելիր asu.am կայք:
www.asu.am

ԱՐՑԱԽԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՄՍԱԹԵՐԹ - ЕЖЕМЕСЯЧНАЯ ГАЗЕТА «АРЦАХИ АМАЛСАРАН»

№ 02(248)
մարտ-2023

ԱՀ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԸ ՆՈՐ ՆԱԽԱՐԱՐԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ ՀՐԱՄԱՆԱԳԻՐ Է ՍՏՈՐԱԳՐԵԼ

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը մարտի 16-ին ստորագրել է հրամանագիր, համաձայն որի՝ Նորայր Յակովի Մկրտչյանը նշանակվել է Արցախի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար:

2023-03-16
president.nkr.am

ԱրՊՀ ՌԵԿՏՈՐ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՇՆՈՐՀԱՎՈՐԵԼ Է ՆՈՐԱՅՐ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հարգարժա՛ն Նորայր Յակովի

Արցախի պետական համալսարանի պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողության և անձամբ իմ անունից շնորհավորում եմ Ձեզ՝ ԱՀ ԿԳՄՍ նախարար նշանակվելու կապակցությամբ:

Մեր երկրի համար այս բարդ ու դժվար իրավիճակում պատասխանատու պաշտոն ստանձնելը առաջին հերթին անխոնջ ծառայություն է հայրենիքին ու առաքելություն: Ձեր անցած ճանապարհը՝ դեռևս պատանեկության տարիքից սկսած հայրենիքի պաշտպանության վեհ գործին նվիրվելն ու հետագա ողջ ընթացքը, վկայում են, որ Ձեզ համար գերակա սկզբունքը հայրենիքի ու պետության շահը վեր դասելն է ու ծառայելը հանուն այդ սկզբունքի:

Դուք Արցախի պետական համալսարանի այն շրջանավարտներից եք, որոնցով մայր բուհը հպարտանալու հիմքեր ունի, ինչպես նաև համագործակցության հարուստ ու բովանդակալից անցած ճանապարհի, որը, լիահույս եմ, դեռ պիտի շարունակվի՝ արձանագրելով նորանոր հաջողություններ:

Հավատացած եմ, որ Ձեր մասնագիտական գիտելիքների, մարդկային որակների ու պատասխանատու ոլորտում ունեցած փորձի արդյունքում կհաջողեք կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի պաշտոնում՝ նպաստելով բնագավառի շարունակական բարելավման և զարգացման գործընթացին:

Մաղթում եմ Ձեզ արդյունավետ աշխատանք՝ հայտնելով նաև իրականացվելիք ծրագրերին մեր ակտիվ մասնակցության և աջակցելու պատրաստակամությունը՝ ի շահ մեր հայրենիքի զարգացման:

ԿԱՅԱՑԵԼ Է ԳԻՏԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏ

Մարտի 7-ին կայացել է ԱրՊՀ գիտխորհրդի նիստ՝ ԱրՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանի նախագահությամբ: Նիստը մեկնարկել է պարգևատրման արարողությամբ: Արցախի Հանրապետության նախագահի հրամանագրով «ԼՂՀ վաստակավոր մանկավարժ»-ի պատվավոր կոչման է արժանացել ԱրՊՀ երկարամյա վաստակ ունեցող դասախոս Վարդուհի Գաբրիելյանը մատաղ սերնդի ուսուցման և դաստիարակության գործում ծեռք բերած ակնառու հաջողությունների և բացառիկ ավանդի համար:

ԱՀ նախագահի հրամանագիրը ներկայացրել և պատվավոր կոչումը հավաստող շնորհագիրը Վարդուհի Գաբրիելյանին է հանձնել ԱՀ ԿԳՄՍ նախարարի պաշտոնակատար Հասմիկ Մինասյանը՝ շնորհավորելով նրան և բարձր գնահատելով Վ. Գաբրիելյանի վաստակը և՛ հանրակրթական դպրոցում, և՛ բարձրագույն ուսումնական հաստատությունում դասավանդելու գործում:

Ռեկտոր Արմեն Սարգսյանն իր հերթին շնորհավորել և բարձր է գնահատել Վարդուհի Գաբրիելյանի մարդկային հատկանիշներն ու մասնագիտական կարողությունները՝ բնութագրելով նրան որպես ազնիվ, աշխատասեր, արդարամիտ, պարտաճանաչ և իր գործի նվիրյալ մասնագետ:

Գիտխորհրդի օրակարգի առաջին հարցը վերաբերում էր 2023-2024 ուսումնական տարվա մագիստրատուրայի և ասպիրանտուրայի մասնագիտությունների և կրթական ծրագրերի ցանկը լիազոր մարմին ներկայացնելուն: Հարցը ներկայացրել է ռեկտորը: Գիտխորհուրդը քննարկել և հաստատել է հարցը: Օրակարգի հաջորդ հարցերով ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտորը և դեկանները ներկայացրել են տեղեկատվություն 2022-2023 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքների, 2022-2023 ուստարվա 2-րդ կիսամյակի ուսումնական գործընթացի ընթացքի մասին:

Օրակարգի հաջորդ հարցով փորձուսուցման բաժնի պետ Անուշ Հայրապետյանը ներկայացրել է տեղեկատվություն ավարտական խմբերի փորձուսուցման մասին:

Գիտխորհուրդը քննարկել և տպագրության է երաշխավորել «Արցախի ժողովրդագիտությունը» հատորաշարի հերթական հատորը, հաստատել ԱրՊՀ ասպիրանտներ Հերմինե Արզումանյանի և Սոնա Մուսայելյանի կատարած անհատական-հետազոտական աշխատանքների պլանը:

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՕԼԻՄՊԻԱԴԱ «ՄԱԹԵՄԱՏԻԿԱ» ԱՌԱՐԿԱՅԻՑ

Մարտի 30-ին ԱրՊՀ-ում բնագիտական ֆակուլտետի մաթեմատիկայի և ֆիզիկայի ամբիոնի նախաձեռնությամբ տեղի է ունեցել օլիմպիադա «Մաթեմատիկա» առարկայից, որին մասնակցել է հանրակրթական դպրոցների 9-12-րդ դասարանների մոտ երեք տասնյակ աշակերտ:

Բնագիտական ֆակուլտետի դեկան, քիմիական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Վոլոդյա Միրզոյանի խոսքով՝ օլիմպիադայի նպատակները դպրոցականների շրջանում բնագիտական առարկաների հանդեպ հետաքրքրություն առաջացնելն ու զարգացնելն է, մասնագիտական կողմնորոշմանը նպաստելը, նաև բուհ-դպրոց կապի ամրապնդումը:

Օլիմպիադայի ավարտից հետո աշակերտներիը շրջել են համալսարանում, դասախոսները նրանց ծանոթացրել են համալսարանի հնարավորություններին, գործող կրթական ծրագրերին:

ԱՄՓՈՓՎԵԼ ԵՆ ԾՐԱԳՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ



«Քաղաքացիական հաբ» հասարակական կազմակերպությունը հայտարարել էր հետազոտական աշխատանքների մրցույթ Արցախի պետական համալսարանի ուսանողների համար: Ամփոփվել են ծրագրի արդյունքները, հաղթողները՝ արժանացել խրախուսանքի:

Ծրագրի հիմնական նպատակն էր ուսանողների մոտ զարգացնել հետազոտական և վերլուծական մտքի կարողություններ՝ աշխատելով տարբեր աղբյուրների հետ:

Հետազոտական աշխատանքների մրցույթում հաղթող են ճանաչվել ԱրՊՀ ուսանողներ Էլինար Գևորգյանը (թեմա՝ Մարդու իրավունքների հիմնախնդիրներն ու լուծումները Արցախում), Աստղիկ Բաբայանը (թեմա՝ Կոռուպցիայի դրսևորումները Արցախում: Պատճառներ և կանխարգելման հնարավոր ուղիներ), Կարեն Բալայանը, Արևիկ Բաղրյանը (թեմա՝ Անվտանգ Արցախի տեսլականը), Սնեժանա Թամրազյանը (թեմա՝ Արցախի Հանրապետության ձեռքբերումներն ու բացթողումները հակամարտության համատեքստում), Արա Սարգսյանը (թեմա՝ Արցախյան հիմնախնդիրը ծագումից մինչև մեր օրեր: Հիմնախնդրի լուծման ուղիները: Արցախի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացման հեռանկարներն ու անկախ պետականության անհրաժեշտությունը):

Մրցույթի հաղթող ուսանողները կստանան կրթաթոշակ՝ 100 000 դրամի չափով:

Նախատեսված է նաև դրամական փոխհատուցում հետազոտական աշխատանքի ղեկավարի/դասախոսի/ համար՝ 50 000 դրամի չափով:

«ՁԱՐԴԵՐ ԵՎ ՊԱՅՔԱՐ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Մարտի 5-ին ադրբեջանական զինուժի դիվերսիոն խմբի հարձակման հետևանքով հերոսաբար նահատակված ոստիկանների հիշատակին Արցախի պետական համալսարանում կազմակերպվել է միջոցառում: Միջոցառումը մեկնարկել է լռության րոպեով՝ ի հիշատակ հանուն հայրենիքի անմահացած հերոսների:

Պատմության ամբիոնի վարիչ, պ.գ.թ., դոցենտ Ն. Սարումյանի նախաձեռնությամբ կազմակերպված միջոցառումը գիտաուսուցողական դասընթաց էր՝ «Ձարդեր և պայքար» խորագրով, որի ընթացքում ուսանողները հանդես են եկել թեմատիկ զեկուցումներով:

Միջոցառմանը Ն. Սարումյանը նշել է, որ արցախահայության համար ստեղծված այս լարված պայմաններում դասընթացը կարևոր նշանակություն ունի և հետապնդում է մի նպատակ. «Երիտասարդ սերնդին նորից վկայակոչել պատմության անցած ուղին՝ հիշեցնելով, որ իր գոյության ընթացքում հայ ժողովուրդը իր անվտանգությունը ապահովելու համար դիմել է ինքնապաշտպանական գործունեության և կարողացել հայրենիքի պաշտպանության դիրքերում ցուցաբերել հերոսություններ: Այսօր մեր առջև ինքնապաշտպանվելու խնդիրն է ծառացել, այսօր մենք բազմաթիվ զոհերի գնով կարողանում ենք մեր անկախ գոյակցությունը ապահովել»:

Կարևորելով հայ ազատագրական պայքարի և նրա գործիչների դերը հայ ժողովրդի գոյապայքարում, նա ընդգծել է, որ գոյապահպանման խնդիրը այսօր էլ իր արժեքայնությունը չի կորցրել, և որ օրվա հրամայականը միասնականությունն է ու պայքարը:

ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՈՒՄ ԱՐՊՀ-ՈՒՄ

ԱՐՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի տնտեսագիտության տեսության և կառավարման ամբիոնի «Կառավարում» մասնագիտացման մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողներն ԱՐՊՀ-ում անցնում են գիտամանկավարժական փորձուսուցում:

Փորձուսուցման շրջանակում մագիստրանտներն առաջին շաբաթը ծանոթացել են ուսումնական գործընթացի կազմակերպման և վարման փաստաթղթերին, 2-րդ և 3-րդ շաբաթների ընթացքում նախ՝ դիտորդի կարգավիճակով մասնակցել փորձառու դասախոսների պարապմունքներին, ապա՝ նախապատրաստվել և անցկացրել տեսական ու գործնական պարապմունքներ բակալավրիատում:

Փորձուսուցման շրջանակում նախատեսված է նաև մագիստրանտների կողմից գիտական նյութերի, դրանց վերլուծության վերաբերյալ մեկնաբանության կամ գիտական հոդվածի նախապատրաստում: Ավարտին ուսանողները պետք է ներկայացնեն հաշվետվություն գիտամանկավարժական փորձուսուցման մասին:

Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան, տ.գ.թ., դոցենտ Ռուզաննա Մանգասարյանի խոսքով՝ փորձուսուցումն անցնում է արդյունավետ՝ նախապես հաստատված պլանի համաձայն: Փորձուսուցումը մեկնարկել է մարտի 6-ից և կտևի մինչև ապրիլի 31-ը:

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԱՐՊՀ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԽՄԲԵՐԻ ՓՈՐՁՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Շարունակվում է ԱՐՊՀ ավարտական խմբերի փորձուսուցումը: Փորձուսուցման շրջանակում մարտի 20-ին ԱՀ ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը հանդիպել է ԱՐՊՀ «Թարգմանչական գործ» 4-րդ կուրսի ուսանողների հետ, ովքեր երկշաբաթյա փորձուսուցում են անցնելու խորհրդարանում:

Ողջունելով ուսանողներին՝ ԱԺ նախագահը նշել է, որ արդեն ավանդույթ է դարձել տարբեր մասնագիտություններով ուսանողների փորձուսուցման կազմակերպումը երկրի օրենսդիր մարմնում: Նա ընդգծել է «Թարգմանչական գործ» մասնագիտության կարևորությունն ու կիրառական նշանակությունը և հորդորել ուսանողներին կատարելագործել գիտելիքները:

Հանդիպման ընթացքում Արթուր Թովմասյանն ուսանողներին է ներկայացրել խորհրդարանի կազմավորման պատմությունը, պետական կառավարման համակարգում օրենսդիր մարմնի դերը, խորհրդարանի առօրյա գործունեությունը և Սահմանադրությամբ Ազգային ժողովին վերապահված լիազորությունները:

Այնուհետև Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարի տեղակալ Գարիկ Ժամհարյանը, ընդունելով ուսանողներին, ներկայացրել է օրենսդիր մարմնի կառուցվածքի, մշտական հանձնաժողովների և խմբակցությունների աշխատանքների, օրենսդրական գործընթացների և ԱԺ գործունեությունը կարգավորող իրավական ակտերի վերաբերյալ տեղեկություններ:

ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՎ ԱՀ ՊԵՏՆԱԽԱՐԱՐԻ ԿՈՉԻՆ

Արձագանքելով Արցախի Հանրապետության պետական նախարար Գուրգեն Ներսիսյանի՝ կամավորական խմբեր ձևավորելու և պետության կողմից իրականացվող ծրագրերի իրագործմանն աջակցելու կոչին՝ Արցախի պետական համալսարանի ռեկտոր Արմեն Սարգսյանը մարտի 6-ին հրավիրել է խորհրդակցություն, որին մասնակցում էին ՈՒՇՀՀՏԱԳ պրոռեկտոր Վիտյա Յարամիշյանը, ֆակուլտետների դեկաններ, ստորաբաժանումների ղեկավարներ, ուսանողական ինքնավար կառույցների պատասխանատուներ:

ԱՐՊՀ ռեկտոր Արմեն Սարգսյանը, կարևորելով համալսարանականների կամավորական ու հանրօգուտ աշխատանքը և պետության կողմից իրականացվող մարդասիրական ծրագրերի իրագործմանն աջակցելու անհրաժեշտությունը, նշել է, որ համալսարանի ուսանողությունն ունի նմանատիպ ծրագրերի մասնակցության բավականին փորձ:

Խորհրդակցության ընթացքում ռեկտորի կողմից ստորաբաժանումների ղեկավարներին և ուսանողների հետ տարվող աշխատանքների պատասխանատուներին տրվել են հստակ հանձնարարականներ՝ ուսանողներից կամավորական խմբեր ձևավորելու և ըստ անհրաժեշտության մարդասիրական տարբեր ծրագրերի իրագործմանն աջակցություն ցուցաբերելու նպատակով:

Ուսանողական ինքնավար կառույցների ներկայացուցիչներն իրենց հերթին այդ աշխատանքներին կամավորագրվելու և իրենց նպաստը բերելու պատրաստակամություն են հայտնել՝ նշելով, որ արդեն ձևավորված խմբեր ունեն, կամավորագրման աշխատանքները կշարունակվեն:

ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐՆ ԱԿՏԻՎՈՐԵՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ԵՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՈՒՄ

Արցախը Հայաստանին կապող ճանապարհի արգելափակման հետևանքով ստեղծված իրավիճակում հանրությանը մարդասիրական ծրագրերով աջակցություն ցուցաբերելու ԱՀ պետնախարարի կոչին է միացել ԱՐՊՀ շուրջ 70 ուսանող:

Ուսանողներն ամենակարճ ժամկետում ձևավորել են կամավորական խմբեր, ընդգրկվել բազմաբնույթ աշխատանքներում. նախ մի խումբ տղա ուսանողներ միացել են բեռնաթափման ծանր աշխատանքներին, ապա նաև մեծ թվով կամավորներ տարբեր հերթափոխերով իրականացրել են փաթեթավորման և տեսակավորման աշխատանքներ:

Նրանք մեծ պատասխանատվությամբ շարունակում են զբաղվել կամավորությամբ՝ իրենց նպաստն ու աջակցությունը ցուցաբերելով հանրությանը:

«ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ԱՐՑԱԽՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԵՎ ՇՐՋԱՓԱԿՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

Մարտի 1-ին ԱրՊՀ հոգեբանական կենտրոնի, ուսանողական գիտական ընկերության և ՈՒԽ մարտական ակումբի համատեղ նախաձեռնությամբ տեղի են ունեցել գիտական ընթերցումներ՝ «Հոգեբանական իրավիճակը Արցախում հետպատերազմյան և շրջափակման պայմաններում» խորագրով:

Միջոցառմանը մասնակցել են տարբեր մասնագիտությամբ սովորող ուսանողներ:

«Հոգեբանություն» մասնագիտությամբ սովորող ուսանողներ Մարիաննա Ղահրամանյանը, Արևիկ Աբրահամյանը և Նինա Սարգսյանը ներկայացրել են Արցախում տիրող հոգեբանական իրավիճակի մասին իրենց կատարած հետազոտությունները:

ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ԱՌԱՋԻՆ ԲՈՒԺՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱրՊՀ ուսանողական խորհրդի մարտական պատրաստության ակումբը նախաձեռնել էր առաջին բուժօգնության դասընթաց՝ տեսական և գործնական փուլերով: Դասընթացը վարել են ոլորտում մասնագիտացած Էմիլյա Հայրիյանը և Իվան Պողոսյանը, ովքեր ներկայացրել են, թե ինչ է առաջին բուժօգնությունը, խոսվել է քաղաքացիական և ռազմական պայմաններում առաջին բուժօգնության առանձնահատկություններից, տարբեր իրավիճակներում առաջին բուժօգնություն ցուցաբերելու սեփական փորձերից, այրվածքների տեսակներից, վիրակապերի, հոգեբանական գործոնի դերի մասին և այլն:

Ուսանողների խոսքով՝ դասընթացն անցել է հետաքրքիր, դասընթացավարները պատասխանել են ուսանողների հարցերին:

«Առաջին բուժօգնությունը շատ կարևոր է յուրաքանչյուրիս համար՝ անկախ մեր մասնագիտական կողմնորոշումից: Շատ կարևոր է հիմնարար գիտելիքներ ունենալը այդ ոլորտից և կարողանալը դրանք ճիշտ և ժամանակին կիրառել, որովհետև մենք մեծ պատասխանատվություն ենք ստանձնում այս դեպքում և գործ ենք ունենում մարդկային կյանքերի հետ»,-կարևորելով դասընթացի նշանակությունը՝ ասել է դասընթացի նախաձեռնող Յուրա Մարգարյանը:

ՔՆՆԱՇՐՋԱՆ

Արցախի պետական համալսարանում քննաշրջան է: Երկրորդ կիսամյակի առաջին փուլի ստուգումները մեկնարկել են մարտի 20-ից և կտևեն մինչև մարտի 31-ը:

Ուսումնական գործընթացի վերահսկման բաժինը համակարգչային եղանակով ստուգումներն անցկացնելու աշխատանքները կազմակերպում է արդյունավետ՝ հաշվի առնելով հովհարային անջատումների գրաֆիկը և դասագործընթացին չխանգարելու հանգամանքը:

Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Գեորգի Սահակյանի խոսքով՝ այս տարբերակն իր առավելությունն ունի նաև, քանի որ քննությունների անցկացումը պարապմունքների հաշվին չեն կազմակերպվում, այլ՝ դասերից հետո, արդյունքում ուսումնական գործընթացը բնականոն ընթանում է:

Ըստ պատասխանատուի՝ ուսանողներն իրազեկված են իրենց իրավունքների և պարտականությունների, համապատասխան կանոնակարգերի մասին, այդ թվում նաև՝ քննասենյակի կարգապահական կանոններին:

Գ. Սահակյանը հավաստիացնում է նաև, որ վերահսկվում են դասախոսների կողմից թեստերի մուտքագրման ընթացքն ու դրանց որակը: Նրա խոսքով՝ պարբերաբար թարմացվում են թեստերը, ենթարկվում փորձաքննության և անհրաժեշտության դեպքում ամբիոնների վարիչների վերահսկողությամբ կատարվում շտկումներ:

ՄԻՋԲՈՒՀԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջբուհական համագործակցության շրջանակում ԱրՊՀ տնտեսագիտության ֆակուլտետի Ֆինանսահաշվային ամբիոնի նախաձեռնությամբ «Ֆինանսներ» 2-րդ կուրսում «Կորպորացիաների շահութաբաժնային քաղաքականությունը» թեմայով առցանց դասախոսությամբ հանդես է եկել ՀՊՏՀ Ֆինանսներ ամբիոնի դոցենտ, տ.գ.թ. Սրբուհի Իսրայելյանը: Դասախոսությունը «Կորպորատիվ ֆինանսներ» դասընթացից էր (դասընթացավար՝ տ.գ.թ., ավագ դասախոս, Ա.Ա.Ալեքսանյան):



Դասախոսության շրջանակներում Սրբուհի Իսրայելյանը ներկայացրել է կորպորացիաների շահութաբաժնային քաղաքականության էությունը, հիմնական տեսակները, ինչպես նաև շահութաբաժնային քաղաքականությունը բնութագրող ցուցանիշների համակարգը:

Երկու բուհերի ներկայացուցիչների միջև պայմանավորվածություն է ձեռք բերվել նմանօրինակ առցանց հանդիպումները դարձնել շարունակական: